

Տէր, պահէ Արամեան հոգեւոր Գահը,
 Մի մարիլ մեր ազգի մի հատիկ ջահը,
 Նրանից է կախուած մեր ազգի շահը,—
 Բացի սուրբ Աթոռը մեզ պաշտպան չը կայ:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՄՇԱԿՈՒԻ ԴԱՂԱՓԱՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ
 ԴԱՍՏԻԱՐԱ ԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՈՎ.*

Ա՛մէն մի հասարակական հաստատութիւն պէտք է իւր
 որոշ գործնական առաջնորդող գաղափարն ունենայ. իսկ
 իւրաքանչիւր անհատի համար այդպիսի գաղափար սրոշելը
 դժուար է. անօգուտ կլինի օր. պահանջել ծնօրներից, իրրեւ
 սողազայ քաղաքացիները դաստիարակողներից, այս կա՛ր այն
 բարոյական յատկութիւնը: Պէտք է սպասել ուրեմն, թէ կգայ
 ժամանակ, երբ տէրութիւնը ինքը հասարակական հաստա-
 տութիւններում կդաստիարակէ այնպիսի մարդկանց որդի-
 ներին, որոնք ընդունակ չեն լինի լաւ բան սովորեցնելու
 իրանց որդւոց:

Բարձր բարոյականութիւն պիտի պահանջել յամենայն
 ղէպս նոցանից, որոնց արհեստն է դաստիարակութիւնը. այ-
 լապէս աւելորդ կլինի բարոյական օրէնքների ծրագիր կազ-
 մել սաների համար. միեւնոյն է. նոքա մեռած տառ կմնան:
 Այսպիսով նախ մանկավարժների վրայ պիտի ուշադրութիւն
 դարձնել, և եթէ նոքա իրրեւ մարդիկ, ազատ չեն կրքերից

*) Տես «Արարատ» մայիս, էջ 441:

և այլ պակասութիւններից, զոնէ պիտի անկեղծ ցանկութիւն ունենան իրանց վատ կողմերն ուղղելու և ձգտելու բարոյական բարձրութեան: Նորա պիտի յարգեն իրանց կոչումը սիրեն ամբողջ հոգեով իրանց գործը և իրանց աշակերտներին: սրբութեամբ կատարեն իրանց պարտքը: Ում մէջ չկայ այդ ձգտումը, ով միայն ուռձկի համար է ծառայում, նորա գործը չէ դատարարակութիւնը: Քանի որ կը լինին այսպիսի դատարարակներ, իսկ զժբախտաբար այդպիսիները շատ շատ են—գպրոցում բարոյական դատարարակութիւնը կլինի անիրագործելի մի ցնորք: Բայց յուսանք, որ հասարակութեան նոր արթնացած ուշադրութեան և լաւագոյն մանկավարժների գաղտնիարների տարածման շնորհիւ միայն անուանով մանկավարժների թիւը կամաց կամաց կսկսէ պակասել և նոցա տեղը կրօնէն ջերմ համոզմունքներով այդ գործին կոչուած անձինք:

Այս սակայն մի պահանջ, որը պիտի դպրոցը անպայման ի կատար ածէ և որը երիտասարդների վրայ բարոյապէս ազդելու ամենաէական խնդիրն է, այն որ դպրոցը կարող է և պէտք է սովորեցնէ ոչ միայն խելացի և լուրջ աշխատանքի, այլ և ստիպէ սիրել աշխատանքը, ներշնչէ այն համոզումը, թէ առանց աշխատանքի չկայ բախտաւորութիւն կեանքի մէջ: Այս նպատակին հասնելու համար դատարարակները շատ միջոցներ ունին:—Առաջին միջոցը անձնական օրինակն է, որն ազդում է երիտասարդի սրտի վրայ աւելի լաւ, քան ամենագեղեցիկ խօսքը. դատարարակն ինքը պիտի օրինակելի լինի աշխատասիրութեան, ճշտադատ հոգիական և բարեխղճութեան՝ իւր պարտականութիւնները կատարելու անսակետից. նա միշտ պիտի յառաջադիմէ ինքնագարգացմամբ, պիտի կատարելագէտ իմանայ իւր առարկան և պիտի ջերմ սիրով զբաւուած լինի դիտութեան ու գրականութեան յառաջադիմութեամբ:

Միւս միջոցը դատարարակութեան եղանակն է,—կենդանի, հետաքրքրական, բայց և լուրջ դաս, որի ընթացքում բոլոր աշակերտները պիտի գրադուած լինին, բոլորը լսեն, մտածեն և հետեւեն. եթէ զգար չէ նուիրուած միայն

հարցերի և կրկնութեան այլ աշակերտներին մի քայլ առաջ է տանուամ շարժում է նոցա միտքը և զարթեցնում հետաքրքրութիւնը, յայսպիսի դասն է աշխատանքի ամենագեղեցիկ վարժութիւնը՝ կամքի ադատութեան և ջանասիրութեան հիանալի կանոնաւորութիւն առնողը: — Երրորդ միջոցն են խելացի մտածած և՛ աշակերտներին կատարելու յանձնարարած ինքնուրոյն աշխատանքները: Զորրորդ՝ բացատրել աշակերտին ամէն մի յարմար դէպքում աշխատանքի գերը մարդկութեան կեանքի մէջ, հասկոյնել նոցա անգործութեան փնասակարութիւնը, և ինչ: Միջոցներ շատ կան և ամեն մի դաստիարակ կարող է ընտրել այն, որն աւելի յարմար է և աւելի գործնական իւր աչքում, երբ նա առաջնորդուում է իւր համոզմունքներով և աշակերտների անհատական յատկութիւններով: Երբ այսպէս ուսուցիչը իւր ունեցած բոլոր միջոցներով վարժեցնում է տանելին լուրջ աշխատանքի, կարող է սէր զարթեցնել նոցա մէջ դէպի դիտութիւնը, մտքուր հաւատ դէպի յառաջադիմութիւնն ու լուսաւորութիւնը: Իսկ ով ճշնում է ներշնչել իտական յարգանք դէպի գիտութիւնը, ով համոզում և ցոյց է տալիս, որ մարդկային կեանքի անփիճկի նպատակներից մէկն է ճշմարտութեան հետամուտ լինելը, նա կատարում է մի բարոյական մեծ և խիստ արժէքաւոր գործ: Եւ եթէ զըստըցը կարողանայ այդ գործը կատարել միշտ կենդանի հետաքրքրութիւն պահպանելով՝ կարելի է յուսալ, որ կանհեղատանայ փերջապէս մնայլ և անբովանդակ յոռետեսութիւնը, որն այժմ թունաւորում է երիտասարդ ուղեղները այն ժամանակ, երբ նոքա հասունանում են, և մեռցնում է նոցա սրտում բարի ձգտումներն ու լաւ զգացումները:

Հարկաւոր չէ ցանկանալ, որ իւրաքանչիւր աշակերտ պատրաստ լինի ամէն մի անձնագործութեան, այլ պիտի աշխատել, որ նոքա անտարբեր չլինին դէպի իրանց հարեանների գժախտութիւնը, իրանց ընկերների անյաջողութիւնն ու ախրութիւնը: Գորա համար նախ իրանք դաստիարակները հեռու պիտի լինին այն փնասակար հայեացքից, թէ զսրտը կռուի ասպարէզ է, գժախտաբար այս հայեացքն է:

սրաշտպանում այնպիսի մի անձնու ինչպիսին է Ուօրբէնը, անգլիական ուսուցչական ընկերութեան նախագահը, «Երպրոյական կռուի դաշտում, ասում է նա, աւելի քան ուրիշ որեւէ ասպարիզում նկատելի է, որ միայն ուժեղագոյնները կարողանում են առաջ ընթանալ և սահմանած կարգի մէջ ամուր մնալ. դա մի գաժան ճշմարտութիւն է, որի վերայ հիմնուած է աշխարհը և որի օգնութեամբ նա կարող է պահպանուել: Անգլիացի յայտնի մանկավարժի այս կարծիքը որքան հին պնդան էլ կեղծ ու անբարոյական է. հանել մանկանց կռուի դաշտը և ստիպել նոցա կռուելու՝ նոցա որոնք կարիք ունեն զարգացման և որոնք առանց բացառութեան իրաւունք ունին բոլորն էլ ստանալու այդ զարգացումը, դա նման կլինի նորան, որ մենք մի կտոր հաց ձգենք տանեակ քաղցած մարդկանց առաջ և այդ կտորը նրանցից ուժեղին հասնէ: Ակնյայտնի է, որ Ուօրբէնը շփոթում է երկու տարբեր հայեացք. նախ ամէն մէկ աշակերտի վիճակուած չէ նկարիչ, բանաստեղծ, երաժիշտ ևն. լինել, և եթէ պատահի որ տաղանդ չունեցողը ընկնի տաղանդաւորների շարքը, անշուշտ ստիպուած կլինի վաղ թէ ուշ այդ կարգից դուրս գալ, որովհետեւ հանձարն ու տաղանդը միայն սակաւաթիւ ընտրուածներին բաժինն է. բայց զարգացում ու կրթութիւն կարող է և պէտք է ամէն մի մարդու իրաւունքն ու բաժինը լինի: Երկրորդ՝ դաստիարակը լաւ և ուժեղ աշակերտներին պէտք է ներշնչէ այն միտքը, թէ նոքա պէտք է օգնեն թոյլերին և ինքն էլ պիտի աւելի կարեկցաբար վերաբերուի վերջիններին. հակառակ դէպքում նա վատ օրինակ կլինի աշակերտների համար և այնուհետեւ թոյլ ընկերի արտասուքը, որ առաջ նոցա մէջ կարեկցութիւն էր շարժում, կլիտուի սառն հեգնութեան: Պէտք է սովորեցնել մանկանց իրար վերաբերուելու եթէ ոչ եղբայրաբար, գոնէ ընկերաբար, այս խօսքի ամենալաւ ըմբռնմամբ. ընկերութիւնը կազմում է ամենագլխաւոր ոյժերից մէկը, որի շնորհիւ աշակերտները դպրոցից տանում են մի քանի լաւ յատկութիւններ, որոնք մնում են նոցա մէջ ամբողջ կեանքի ընթացքում: Լաւ ընկերական կեանքը

մանկանց և երիտասարդների մէջ ոչ միայն վերացնում է նոցա վատ յատկութիւններից շատերը, այլ և յաճախ դրդողում է անձնագոհութեան և սորանով միջոց է տալիս ումանց վայելելու բարձր հոգևոր ուրախութիւն: Ընկերութիւնը սովորեցնում է օգնել միմեանց, մէկի դժբախտութիւնը բոլորինը համարել և ընդհանուր ոյժերով դժբախտութիւնից հանել նոցա, որոնք ընկած են նորա մէջ, ամուր պահանել ընդհանուր շահերը, թէկուզ դոքա լինէին անձնական շահերին հակառակ: Առ հասարակ համերաշխ ընկերութիւնը ազնիւ դաստիարակութեան մի դպրոց է, որը հաստիքութեան հակառակ ոյժ է ներկայանում և տալիս է, թէև իդեալից դուր հեռու, բայց իւր ժամանակի համար ամենալաւ յարաբերութեան օրինակը, որը պիտի իրագործուած լինի մարդկանց մէջ:

Դպրոցական պայմանների անբնական լինելու պատճառով յաճախ խիստ համակրելի ընկերական գաղափարներ դաստիարակների ցանկութեան հակառակ են հանդիսանում, որոնք և հալածում են այն, իբրև անհնազանդութեան վրնասակար արտայայտութիւններ: Բայց եթէ դաստիարակները չլռուէին ընկերական գաղափարի դէմ, այլ ընդհակառակն կարողանային նրանից օգտուել դաստիարակչական նպատակներով, այն ժամանակ նա կլինէր աշակերտների համար իբրև պաշտպանութեան մի ոյժ: Այն ուսուցիչը, որը գրաւում է աշակերտների հաւատը, յարգանքը և սէրը՝ ինքը կարող կլինի առաջնորդ հանդիսանալ նոցա ընկերական յարաբերութիւնների միջոցին, կարող կլինի նոցա աւելի ամրապնդել, հեռու պահել սխալ ճանապարհներից, դէպի որոնց տանում են նրանց երիտասարդութիւնն ու անսովոր ձութիւնը:

Ահա այն դրական հետևանքները, որին կարող է հասնել ամէն մի բարեխիղճ ուսուցիչ իւր անձնական օրինակով և խելացի վերաբերմամբ թէ դէպի իւրաքանչիւր աշակերտ առանձնապէս և թէ դէպի բոլորն ի միասին: Եւ վերջապէս դրականութեան ու պատմութեան առարկաներով պարապող ուսուցիչները ունենում են իրանց ձեռքին ամենալաւ բա-

բոյական կրթական միջոցները, որոնք ամփոփուած են լինում հէնց իրանց առարկայի մէջ: Գեղեցիկ զբաղանութեան արդիւնքները վերլուծելիս և ուսումնասիրելիս պիտի միշտ ի նկատի ունենալ զարգացնելու նրանց մէջ գեղագիտական ճաշակը, որը որոշ բարձրութեան հասնելով արդէն ապահովում է մանկան վատ հակումներէց, նոյն նպատակին են հասցնում նաեւ երաժշտութիւնը, երգեցողութիւնը, նկարչութիւնը ևլն:

Ինչ վերաբերում է զբաղանական օրինակելի երկերի ընթերցանութեան, նմանապէս և պատմական փաստերի ուսումնասիրութեան, սոցանից աշակերտները սովորում են և իւրացնում գիտակցական-բարոյական համոզումներ և բարձր խելախնդր, որոնց ձգտելը իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է համարուում: Երբ նա հասարակութեան անդամ է, զաւնում: Բարոյական գաստիարակութիւնը հետեւում է երկու, թէև սերտ կապուած, բայց ոչ միանման խնդիրներին. նախ կրթում է զգացումը, և ապա համոզումը, վերջինիս հետ նաեւ կամքը, որն ընդունակ է զարձնում աշակերտին իւր համոզումն ի կատար ածելու կեանքի մէջ:

Այսպէս, ազգային պատմութեան ուսումնասիրութեամբ ուսուցիչը պիտի օգտուի երիտասարդների մէջ գաստիարակելու հայրենասիրական զգացումներ: Հայրենասիրութեան զգացումը ինչպէս սերը գէպի իւր ծննդավայրը և իւր հայրենիքը, զարթնում: զարգանում և ամրանում է դեռ նախ քան զսրոց մտնելը. նա չի պահանջում առանձին հոգատարութիւն, որովհետև նա նոյնքան բնական է և անխուսափելի ինչպէս ընտանեկան կապերի զգացումը: Ար և իցէ գեղարուեստական մի երկ կարգալիս ուսուցիչը պիտի աշխատէ այնպէս տաճնորդել իւր աշակերտներին, որ նոքա վաղ իսկոյն նկատեն և իրանց հեռու պահեն ազեղ հակումներէց, որ նոքա զուեն և աշխատեն, եթէ իրանց մէջ էլ այգալիս ազեղ հակումներ նկատելի լինին, խոյս տալ գոցանից: Կորդացածը լու հասկացնելու ամենատեական միջոցը զրուցատարութիւնն է կարդացած գրքի մասին, երբ մտքերի փոխանակութիւնն է լինում, այստեղ պարզուում են

Հայկացիները՝ ինչպէս իրանը, այնպէս և օտարինը առարկան քննութեամբ է ամէն կողմից և զրուցակիցները իրանց համար աննկատելի կերպով ենթարկուում են այդ օգտակար գաղափարներին: Այսպիսի զրուցատրուածիւնները նորութիւն չեն նաև մեզ մօտ, գործին նուիրուած մարդիկ յաջողութեամբ առաջ են տանում այդ և միշտ էլ երախտագէտ աշակերտները պահպանում են նոցա մասին բարի և քաղցր յիշողութիւն, ինչպէս իսկական բարոյական դաստիարակների մասին:

(Քաղեց) Ա. Բ. Շահնազարեան

Մ Ա Ր Ի Ֆ Ա Ս

Հրատարակում ենք ահա այն Մարիբասը, որի գիւտը Բազմավէպի մէջ Բասմաշեան (1896. նոյ. 3), Հանդէս Ամս.յի մէջ Կարրիէր՝ Հ. Տաւեանին ուղղուած մի նամակով (1897, յունի.), աւետեցին: Իւրաքանչիւր բանասէր Հայ անշուշտ նուազ կամ առաւել հետաքրքիր անհամբերութեամբ սպասում է այս, Հանդէս Ամս.յի լեզուով խօսելով—«ապշեցուցիչ աւետսի» արդիւնքը տեսնելուն:

Ամէնից առաջ մի քանի խօսք Մարիբասի ներկայ թարգմանութեան Ձեռագրի մասին: Մարիբասեան այս քաղուածքը գտնելու պատիւը պատկանում է լիովին նաու (F. Nan) ջանասէր ասորագէտ քահանային, որը Փարիզի և Լոնտոնի մատենադարաններում եղած բոլոր ասորի ձեռագիրները մանրադնին քննութեան է ենթարկել: Արդէն իւր 1896-ին Միքայէլ ասորու ձեռագրի մասին գրած մի յօդուածի մէջ (Journal asiatique, 1896. 9-e série, t. VIII, թ. 523 ss.) նրա ուշադրութիւնն է գրաւել վերջնիս աղ-